ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«10» օգոստոսի 2026թ. N ՄՊ 508 -Ա

ք. Արմավիր

**«ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՄԵՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Մերի Մովսիսյանի 2026 թվականի օգոստոսի 7-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մերի Մովսիսյանին տրամադրել 2026-2027 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի օգոստոսի 14-ից 27-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Մերի Մովսիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանին:
3. «Սարդարապատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական գծով տեղակալ Հասմիկ Գրիգորյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի օգոստոսի 14-ից 27-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Մերի Մովսիսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 28-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2508407... **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**